

նեցել լսել այսպիսի իրաւացի պահանջ հայ ընթերցողների մեծամասնութիւնից:

Այսպիսի մի աշխատութեան կարիքը վաղուց արդէն զգալի էր եղած մեր գրական ասպարէզի վրայ, և ահա պ. Վ. Ա.-ի յօրինուած գրքոյկը կարող է առ այժմ լրացնել այդ պակասը՝ տալով թէ հայ գրագէտին և թէ հայ ընթերցողին այն մշտական ասացուած ճշմարտաբանութիւնները, որ բազմադարեան կիրառութեամբ մտել և անհրաժեշտ տեղ են բռնել եւրոպական մտքերի արտայայտութիւնների մէջ:

Ուստի մենք միայն շնորհաւորել կարող ենք երիտասարդ յօրինողին իւր այսպիսի գեղեցիկ և օգտակար գործի հրատարակութեամբ:

Վերջացնելով մեր այս համառօտ խօսքը վերոյիշեալ գրքոյկի մասին՝ չը մոռանանք յիշել, որ աշխատութեանս յօրինողի կազմած և գրքոյկին կցած լատիներէն լեզուի Համառօտ Քերականութիւնը չափաւոր կերպով քերականական ծանօթութիւն կարող է առաջ ցանկացողին յիշեալ լեզուի սկզբնական կազմութեան մասին: Ուստի կարող ենք յանձնարարել այս գրքոյկը հայ ընթերցող հասարակութեան՝ սպասելով երիտասարդ յօրինողից աւելի և աւելի ռոտւար աշխատութիւններ հայ գրականութեան համար թէ այսպիսի և թէ ուրիշ ճիւղերին վերաբերեալ: Իսկ առայժմ գրքոյկին կազմողը նոյն լատիներէն դարձուածքներից կարող է բացականչել իրան յարմար ասացուածք թէ՛ «ինչ կարող եմ կատարում եմ, թող կատարէ աւելի լաւ, ով կարող է»:

Ն. Յարոյ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ-ՅՈՒՄ ԹԻՖԼԻՍ 1910.

Եօթնամսնական և ութսունական թուականներին կովկասեան հայութեան մտաւոր ասպարէզում գործող ռահվիրաներից մէկը, որ մի շարք լուրջ գրականական ուսումնասիրութիւններ է տուել մեզ, հրատարակել է մի շատ կարեւոր տեղեկացոյց, որ պարունակում է եւրոպացի այն ճանապարհորդների և դիտնականների հեղինակութիւնների ցուցակը, որոնք գրել են Հայաստանի և հայութեան մասին. պ. Կոստանեանը հրատարակել է այդ իրեն յատուկ մի լուրջ յառաջաբանի հետ:

Ով հաւատում է, որ հայ ժողովրդի ապագան անարխիստների, կեանքի աւելիչների և բախախնդիր խմբակցութիւնների

ձեռքին չէ մնալու, որ հայը ունի դեռ կատարելու մի օգտակար, քաղաքակրթական դեր մերձաւոր Արեւելքում, նա մեծ հաճոյքով պիտի թերթի Կ. Կոստանեանի գիրքը: Հեղինակը նոյնպէս հաւատում է, որ Նւրոպական շատ գիտնական հեղինակներ ճիշտ են որոշել հայ ժողովրդի շինարար յատկութիւնները, ուստի և զրքի ճակատին դրել է Տուրնըֆօրի գովասանքը հայերի մասին թէ՛ նրանք աշխարհիս լաւագոյն մարդիկն են (Les armeniens sont les meilleurs gens du monde):

Նւրոպայի հետ հայերի սերտ յարաբերութիւնն սկսուեց Կիլիկիայի թագաւորութեան օրից տասնևմէկերորդ դարում: Սրանից յետոյ նւրոպացիք անդադար հետաքրքրուել են հայերով և Հայաստանով և բազմաթիւ ճանապարհորդներ և հեղինակներ գրել են մեր մասին և նրանցից շատերը շատ մեծ համակրութեամբ: Երկար կլինի պատմել պ. Կոստանեանի գրքի բովանդակութիւնը: Մեր հարուստները, որոնք հարիւր հազարներ են տուել գնդակի ու դաշոյնի երկիւղից, շատ կ'զարմանան, որ օտար գիտնականները մի յիսուն տարի առաջ անգամ հայերի մէջ գտել են շատ համակրելի գծեր և գովաբանել են մեզ: Բայց մենք պիտի մխիթարուենք այն գիտակցութեամբ թէ, ազգը, որպէս և մարդ, կարող է հիւանդ մասեր ունենալ, ժամանակաւորապէս վարակուել և բժշկուել: Ուստի և մենք յիշում ենք նւրոպացի ճանապարհորդների լաւագոյն կարծիքները մեր մասին, հաստատ հաւատացած լինելով, որ հայ ժողովուրդը իւր բազմաթիւ թերութիւններով հանդերձ ընդհանուր առմամբ արժանի է նւրոպացիների համակրութեան և պ. Կոստանեանը նոյնպէս անհիմն կերպով չէ, որ հաւատում է հայ ազգային:

Բայրընը ասել է, որ աշխարհիս երեսին դժուար է գտնել մի ուրիշ ազգ, որի պատմական անցեալն այնքան սակաւ արաւաւորուած լինի ոճիրներով, ինչպէս հայինն է, իսկ նրանց ախտերը արդիւնք են այն բռնակալութեան, որի տակ երկար հեծում են եղել: Բայրընը իհարկէ խօսում է ժողովրդի մասին և ոչ հայ թագաւորների և նախարարների մասին, որոնք բազմաթիւ անգամ մատնում ու դաւաճանում էին միմեանց և նոյնիսկ կանգ չէին առնում եղբայրասպանութեան առաջ: Անգլիացի Հոմը և Հակոստաուզէնը նոյնպէս հայերին ազնիւ ժողովուրդ են անուանում: Ամերիկացի մխիթոներ Դուայթն ասում է, որ հայերը Արեւելքի անգլո-սաքսերն են, Լամարթինն ասում է, որ հայերը Արեւելքի զուգարացիք են, իսկ Դիւլօրիէն կարծում է, որ հայերին կարելի է համեմատել հոլլանդացու հետ:

Գէաք է ցանկանալ և խնդրել, որ պ. Կոստանեանը լրացնի

իւր գեղեցիկ գաղափարի իրականացումը մի նոր աշխատութեամբ, պ. Կոստանեանը շատ մեծ ծառայութիւն մատուցած կ'լինի հայ քանասիրութեան, եթէ ձեռնարկի գրելու և ուսն հեղինակների անուանացուցակը, որոնք ոչ միայն ճանապարհորդել են Հայաստան, այլ և գրել են հայոց պատմութեան և գրականութեան մասին, որպէս և ուսաց **АКТЫ** հրատարակութիւնների մէջ եղած տեղեկութիւնների ցանկը:

Գ. Եճգիրտեան

ՀԱՅ-ՌՈՒՄ ԲԱՌԱՐԱՆ. ԿԱԶՄԵՑ ՅԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Խմբագրութիւնս ստացաւ Յ. Թումանեանի կազմած նոր հայ-ռուս բառարանի մի օրինակ: Աշխատասիրողը, որ անյայտ չէ հայ հասարակութեան իր գրական աշխատասիրութիւններով, այդ բառգիրքը յարմարեցրել է հայ աշակերտների հասակին, շեշտադրութիւններով և քերականական ծանօթութիւններով:—Վաղուց արդէն զգալի էր այդպիսի մի բառգրքի կարևորութիւնը թէ ուսանող դասի և թէ հասարակ ընթերցող ժողովրդի համար ուսն լեզուն ուսանելու գործում և այդ ծառայութիւնը իւր նոր աշխատութեամբ բաւական բարեխիղճ կերպով կատարել է պ. Թումանեանը:

Յանձնարարում ենք այդ գիրքը հայ աշակերտներին և ընթերցող ժողովրդին, իբրև ներկայումս եղած բառարաններից յարմարը թէ ըստ ծաւալին, թէ ըստ գնի և թէ ըստ բովանդակութեան:

Հայ

ՄՏԱՑՈՒՄԻ ԳՐԳԵՐ

Կ. Կոստանեանց. Հայագիտութիւնն Արևմտեան Եւրոպայում, համառոտ տեսութիւն և գրացուցակ. Թիֆլիս 1910 զ. 1 ո.
Գարբ. Սունդուկեանց (նոյն և Համմաւ.) Սէր և ազատութիւն, կատակ. հինգ արարուածով. Թիֆլիզ 1910 զ.